

ԿՈՆՎԵՆՑԻԱ
ԿՏԱԿԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն Կոնվենցիան ստորագրած պետությունները,
ցանկանալով սահմանել ընդհանուր դրույթներ կտակային հանձնարարությունների
ծեւին վերաբերող իրավունքների հակասությունների վերաբերյալ,
որոշեցին այդ նպատակով կնքել Կոնվենցիա եւ համաձայնեցին հետեւյալ
դրույթների վերաբերյալ.

ՀՈՂՎԱԾ 1

Կտակային հանձնարարությունը ձեւի առումով վավերական կլինի, եթե դրա ձեւը
համապատասխանի այն վայրի ներքին իրավունքին՝

- ա) որտեղ կտակարարը կատարել է այն, կամ
- բ) որի քաղաքացին է եղել կտակարարը հանձնարարությունը կազմելու կամ իր
մահվան պահին, կամ
- գ) որտեղ կտակարարն ունեցել է իր բնակության վայրը հանձնարարությունը
կազմելու կամ իր մահվան պահին, կամ
- դ) որտեղ կտակարարը մշտական բնակության վայր է ունեցել հանձնարարությունը
կազմելու կամ իր մահվան պահին, կամ
- ե) որտեղ գտնվում է հանձնարարությանն առնչվող անշարժ գույքը:

Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե ազգային օրենսդրությունը բաղկացած է
չմիավորված համակարգերից, կիրառվելիք օրենքը որոշվում է այդ համակարգում
գործող կանոններով եւ, նման կանոնների բացակայության դեպքում, այդ համակարգի
չրջանակներում գործող տարբեր իրավունքներից կտակարարի հետ առավել սերտ կապ
ունեցող իրավունքով:

Որոշակի վայրում կտակարարի բնակության վայր ունենալը կամ չունենալը
որոշվում է այդ վայրում գործող օրենքով:

ՀՈՂՎԱԾ 2

1-ին հոդվածը կիրառվում է ավելի վաղ արված կտակային հանձնարարությունը
վերացնող կտակային հանձնարարության նկատմամբ:

Վերացումը ձեւի տեսանկյունից վավերական է դիտվում, եթե այն, 1-ին հոդվածի
համաձայն, համապատասխանում է այն իրավունքի կանոններից մեկին, որոնց
համապատասխան վերացված հանձնարարությունը վավերական էր:

ՀՈՂՎԱԾ 3

Սույն Կոնվենցիան չի ազդում Պայմանավորվող պետություններում գոյություն
ունեցող կամ ապագայում ընդունվելիք իրավունքի կանոնների վրա, որոնք ճանաչում
են այն կտակային հանձնարարությունները, որոնք արված են այն իրավունքի ձեւական
պահանջներին համապատասխան, որոնք տարբերվում են նախորդ հոդվածներում նշված
իրավունքից:

ՀՈՂՎԱԾ 4

Սույն Կոնվենցիան կիրառվում է նաեւ կտակային հանձնարարությունների ձեւի
նկատմամբ, որոնք արված են մեկ փաստաթղթում՝ երկու կամ ավելի անձանց կողմից:

ՀՈՂՎԱԾ 5

Սույն Կոնվենցիայի նպատակներով ցանկացած դրույթ, որը սահմանափակում է

կտակային հանձնարարությունների թույլատրելի ձեւերը՝ կապված կտակարարի տարիքի, քաղաքացիության կամ նրա այլ անձնական հատկանիշների հետ, դիտվում է որպես ձեւի հարցերին վերաբերող: Նույն կանոնը կիրառվում է նաեւ կտակային հանձնարարության վավերականության համար պահանջվող վկաների գնահատականների նկատմամբ:

ՀՈՂՎԱԾ 6

Սույն Կոնվենցիայում շարադրված հակասությունների կանոնների կիրառումը կատարվում է առանց փոխադարձության որեւէ պահանջի:

Կոնվենցիան կիրառվում է, եթե նույնիսկ ներգրավված անձինք Պայմանավորվող պետության քաղաքացիներ չեն, կամ նախորդ հոդվածների ուժով կիրառման ենթակա իրավունքը չի հանդիսանում այդ Պայմանավորվող կողմի իրավունք:

ՀՈՂՎԱԾ 7

Սույն Կոնվենցիայով կիրառելի հայտարարված ցանկացած իրավունքի կիրառումը կարող է մերժվել միայն այն ժամանակ, երբ այն ակնհայտորեն հակասում է "հանրային կարգին":

ՀՈՂՎԱԾ 8

Սույն Կոնվենցիան կիրառվում է բոլոր այն դեպքերում, երբ կտակարարը մահանում է դրա ուժի մեջ մտնելուց հետո:

ՀՈՂՎԱԾ 9

Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն, հաշվի չառնելով 1-ին հոդվածի երրորդ կետը, կարող է իրեն իրավունք վերապահել, *lex fori* որոշելու այն վայրը, որտեղ կտակարարն ունի մշտական բնակության վայր:

ՀՈՂՎԱԾ 10

Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է իրեն իրավունք վերապահել չճանաչելու բանավոր արված կտակային հանձնարարությունները, որոնք արվել են իր քաղաքացիներից մեկի կողմից, որը չունի այլ պետության քաղաքացիություն՝ բացառությամբ բացառիկ հանգամանքների:

ՀՈՂՎԱԾ 11

Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է իրեն իրավունք վերապահել՝ հանձնարարություններին վերաբերող իր իրավունքի դրույթների ուժով չճանաչելու արտասահմանում արված կտակային հանձնարարությունների ձեւերը, երբ առկա են հետեւյալ պայմանները.

ա) կտակային հանձնարարությունը ձեւի տեսանկյունից վավերական է այն իրավունքի ուժով, որը կիրառվում է միայն այն վայրի նկատմամբ, որտեղ կտակարարը կազմել է իր կտակային հանձնարարությունը.

բ) կտակարարն այն պետության քաղաքացին է, որը վերապահում է արել.

գ) կտակարարը մշտական բնակության վայր է ունեցել տվյալ պետությունում կամ սովորաբար բնակվել է այնտեղ, եւ

դ) կտակարարը մահացել է ոչ այն պետությունում, որտեղ արել է իր հանձնարարությունը:

Սույն վերապահումը գործում է միայն այն սեփականության նկատմամբ, որը գտնվում է վերապահում արած պետությունում:

ՀՈՂՎԱԾ 12

Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է իրեն իրավունք վերապահել սույն Կոնվենցիայի կիրառման ոլորտից բացառել կտակային այն կետերը, որոնք, իր իրավունքի համաձայն, չեն վերաբերում ժառանգության հարցերին:

ՀՈՂՎԱԾ 13

Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն, հաշվի չառնելով 8-րդ հոդվածը, կարող է իրեն իրավունք վերապահել սույն Կոնվենցիան կիրառել միայն այն կտակային հանձնարարությունների նկատմամբ, որոնք արվել են դրա ուժի մեջ մտնելուց հետո:

ՀՈՂՎԱԾ 14

Սույն Կոնվենցիան ստորագրման համար բաց է Միջազգային մասնավոր իրավունքի հարցերով Հաագայի խորհրդաժողովի իններորդ նստաշրջանում ներկայացված պետությունների համար:

Այն ենթակա է վավերացման, եւ վավերագրերն ի պահ են հանձնվում Նիդերլանդների արտաքին գործերի նախարարությանը:

ՀՈՂՎԱԾ 15

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 14-րդ հոդվածի երկրորդ պարբերության մեջ նշված երրորդ վավերագիրն ի պահ հանձնելուն հաջորդող վաթսուներորդ օրը:

Յուրաքանչյուր ստորագրող պետության համար, որը վավերացրել է Կոնվենցիան հետագայում, այն ուժի մեջ է մտնում վավերագիրն ի պահ հանձնելու օրվան հաջորդող վաթսուներորդ օրը:

ՀՈՂՎԱԾ 16

Միջազգային մասնավոր իրավունքի հարցերով Հաագայի խորհրդաժողովի իններորդ նստաշրջանում չներկայացված ցանկացած պետություն կարող է միանալ դրան 15-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո: Միանալու մասին փաստաթուղթն ի պահ է հանձնվում Նիդերլանդների արտաքին գործերի նախարարությանը:

Կոնվենցիային միացող պետության համար այն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվան հաջորդող վաթսուներորդ օրը:

ՀՈՂՎԱԾ 17

Ցանկացած պետություն ստորագրելու, վավերացնելու կամ միանալու ժամանակ կարող է հայտարարել, որ սույն Կոնվենցիան տարածվում է բոլոր այն տարածքների կամ դրանցից մեկի կամ մի քանիսի նկատմամբ, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է: Նման հայտարարությունն ուժի մեջ է մտնում շահագրգիռ պետության համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրը:

Դրանից հետո՝ ցանկացած ժամանակ, յուրաքանչյուր տարածման մասին ծանուցվում է Նիդերլանդների արտաքին գործերի նախարարությունը:

Նման տարածման մեջ նշված տարածքների նկատմամբ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում նախորդ պարբերության մեջ նշված ծանուցմանը հաջորդող վաթսուներորդ օրը:

ՀՈՂՎԱԾ 18

Յուրաքանչյուր պետություն միանալու կամ վավերացնելու պահից ոչ ուշ, կարող է անել սույն Կոնվենցիայի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ եւ 13-րդ հոդվածներում նշված վերապահումները: Որեւէ այլ վերապահում չի թույլատրվում:

Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն 17-րդ հոդվածի համաձայն տարածման

մասին ծանուցելիս կարող է նաեւ նշված վերապահումներից մեկը կամ ավելին անել ծանուցման մեջ նշված բոլոր տարածքների կամ դրանցից մի քանիսի նկատմամբ:

Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է ցանկացած ժամանակ հետ վերցնել արված վերապահումը: Նման հետ վերցնելու մասին ծանուցվում է Նիդերլանդների արտաքին գործերի նախարարությունը:

Նման վերապահման գործողությունը դադարեցվում է նախորդ կետում նշված ծանուցմանը հաջորդող վաթսուներորդ օրը:

ՀՈՂՎԱԾ 19

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում հինգ տարվա ընթացքում՝ 15-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն ուժի մեջ մտնելուց հետո, նույնիսկ այն պետությունների համար, որոնք վավերացրել են այն կամ միացել են դրան հետագայում:

Եթե չի լինում որեւէ չեղյալ հայտարարում, այն ինքնըստինքյան երկարացվում է յուրաքանչյուր հինգ տարին մեկ:

Յուրաքանչյուր չեղյալ հայտարարման մասին ծանուցվում է Նիդերլանդների արտաքին գործերի նախարարությանը հինգ տարվա ժամկետի ավարտին նախորդող առնվազն

վեց ամիս առաջ:

Այն կարող է սահմանափակվել որոշակի տարածքներով, որոնց նկատմամբ Կոնվենցիան կիրառվում է:

Չեղյալ հայտարարումը կարող է գործել միայն այն պետության նկատմամբ, որը ծանուցել է այդ մասին: Կոնվենցիան ուժի մեջ է մտնում մյուս Պայմանավորվող պետությունների համար:

ՀՈՂՎԱԾ 20

Նիդերլանդների արտաքին գործերի նախարարությունը 14-րդ հոդվածում նշված պետություններին, ինչպես նաեւ 16-րդ հոդվածի համաձայն Կոնվենցիային միացած պետություններին ծանուցում է.

ա) 14-րդ հոդվածի համաձայն ստորագրումների եւ վավերացումների մասին.

բ) 15-րդ հոդվածի առաջին կետի համաձայն սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա մասին.

գ) 16-րդ հոդվածի համաձայն միացումների եւ դրանց ուժի մեջ մտնելու օրվա մասին.

դ) 17-րդ հոդվածի համաձայն տարածումների մասին եւ դրանց ուժի մեջ մտնելու օրվա մասին.

ե) 18-րդ հոդվածի համաձայն վերապահումների եւ դրանք չեղյալ հայտարարելու մասին.

զ) 19-րդ հոդվածի երրորդ կետի համաձայն չեղյալ հայտարարելու մասին:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարվել է Հաագայում, 1961թ. հոկտեմբերի 5-ին, անգլերեն եւ ֆրանսերեն, երկու տեքստերի միջեւ տարակարծությունների դեպքում ֆրանսերեն տեքստի գերակայությամբ, մեկ օրինակով, որոնք ի պահ են հանձնվում Նիդերլանդների Կառավարության արխիվներին, եւ որի վավերացված պատճենը դիվանագիտական ուղիներով

ուղարկվում է Միջազգային մասնավոր իրավունքի հարցերով Հաագայի խորհրդածողովի իններորդ նստաշրջանում ներկայացված պետություններից յուրաքանչյուրին:

